ԳԱՅԱՆԵ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԲՈՒՀՈՒՄ

Ոչ վաղ անցյալում դասավանդումը տարվում էր մի սխեմայով, որտեղ առաջնայինը ուսումնական առաջադրանքները հաջող կատարելն էր: Դասավանդողները գնահատում էին սովորողի աշխատանքը, դատողություններ անում նրա առաջադիմության մասին, ոչ հաճախ լսում նրա կարծիքը իր սովորելու գործընթացի, նրա ծեռքբերումների կամ ձախողումների և դրանց պատճառների մասին:

Ներկայումս իրավիճակը փոխվել է և փոխվում է: Կրթության ոլորտում կատարվող բարեփոխումները, մոտեցման նոր ձևերը օգնում են ուսուցման կենտրոնում տեսնել «սովորող-անձին», ավելի խորը ուսումնասիրել և թափանցել նրա մեջ: Դրական այս գործընթացը դասավանդողին ավելի լայն հնարավորություն է ընձեռում հասկանալու սովորողին, ավելի անկեղծ լինելու նրա հետ, զրուցելու ուսումնական պրոցեսի մասին, խորանալու այդ պրոցեսին խոչընդոտող հանգամանքների մեջ, օգնելու և քաջալերելու նրանց, ճիշտ և նպատակային ուղղորդելու նրանց ջանքերը: Դրական այս միտումն օգնում է կառուցել «սովորող և սովորեցնող» համագործակցությունը:

Համագործակցությունը դասախոսին հնարավորություն է տալիս հասնելու իր հիմնական նպատակին, և դաստիարակելու ակտիվ, ճկուն, քննադատաբար մտածող ուսանող:

Ամերիկացի մանկավարժ և փիլիսոփա Ջոն Դյուին (Дэвид Клустер, "Что такое критическое мышление?", "Перемена" – Международный журнал о развитии мышления через чтение и письмо, 2001/4, стр. 36) նշում է. «Քննադատական մտածողությունը սկսում է այն պահին, երբ սովորողը ներգրավվում է որևէ խնդրի մեջ»: Նա գտնում է, որ խնդիրները խթանում են սովորողների բնական հետաքրքրությունը ու քննադատական մտածողությունը. «Միայն առաջադրված խնդրի պայմաններից գլուխ հանելու պայքարում և սեփական ուժերով լուծում գտնելու դեպքում է սովորողը իսկապես մտածում»:

Կանադացի պրոֆեսոր Ռալֆ Հ. Իոնսոնը (Дэвид Клустер, "Что такое критическое мышление?", "Перемена" – Международный журнал о развитии мышления через чтение и письмо, 2001/4, стр. 36) քննադատական մտածողությունը սահմանում է որպես «ուղեղի հստակ աշխատանք», որն օգնում է անհատին թղթին հանձնել ողջամիտ դատողությամբ որևէ նյութի մասին գործողության մշակված տարբերակ:

Այս խնդրի մասին Վիգոտսկին, ինչպես նաև Կոստան նշել են, (Ջինի Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ, Չարլզ Թեմփլ, համագործակցային ուսումնառու-

թյուն", ուղեցույց v (պատրաստվել է «քննադատական մտածողության» զարգացումը կարդալու և գրելու միջոցով՝ ծրագրի համար) ԱՄՆ, 1988, էջ 11) որ մտավոր զարգացումն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հասարակական գործընթացի արդյունքն է: Վիգոտսկին պնդում է, որ բարձր մակարդակի մտածողությունը ծագել է շփման, այսինքն՝ մարդկանց միջև երկխոսության շնորհիվ: Ուսուցման ընթացքում քննադատական մտածողության զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու արդյունավետ միջոցներից մեկը համագործակցային ուսումնառության մեթոդների ներմուծումն է:

Փորձենք պարզաբանել, թե ինչ է համագործակցային ուսումնառությունը:

"Համագործակցային ուսումնառությունը ոչ միայն ուսուցման ռազմավարություն է, այլ նաև անհատի ձևավորման փիլիսոփայություն (Ted Panitz, 1996, www.lau.ac.uk/delibertations/collab. learning/panitz2.html)": Մարդկանց միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու ժամանակ (զանազան քննարկումներ, բանավեճեր, հավաքույթեր, խմբերով զրույցներ), բացահայտվում է յուրաքանչյուրի ունակությունները և կարողությունները, հաղորդակցման այդ ճանապարհին շատ բան վերցնում ես և տալիս: Ի հայտ է գալիս անհատի զարգացվածության աստիճանը, խոսքի կուլտուրան, բառապաշարը, լսելու, հասկանալու ունակությունները և ի վերջո համագործակցության հիմնական ձեռքբերումը՝ միասնական աշխատանքի միջոցով համաձայնության գալն է, որտեղ չի կարելի առանձնացնել կոնկրետ մեկին, որպես լավագույնի: Համագործակցային ուսումնառության մասնակիցները այս փիլիսոփայությանը հետևում են ոչ միայն ուսումնական գործընթացներում, այլև բազմամարդ զանազան միջոցառումների ժամանակ, տարբեր շփումների ժամանակ, ընդհանրապես առօրյա կյանքում:

Որպես դասավանդման եղանակ համագործակցային ուսումնառությունը ներառում է ուսումնական աշխատանքների ողջ բազմազանությունը, որտեղ ուսանողների խմբերը միասին աշխատում են լսարանում և դրանից դուրս:

Աշխատելով առաջադրանքների վրա յուրաքանչյուր սովորող անհատապես է մտածում, իսկ հետո կիսում է իր մտքերը նախ իր զույգի հետ, այնուհետև՝ ամբողջ խմբի: Այստեղ կարևորվում է ուսանողների միասին աշխատելու, խնդիրները համատեղ լուծելու, բոլոր անդամներին ներառելու հանգամանքը: Կարևորվում է մեկ հանգամանք ևս՝ արմատավորվում է դրական առումով խմբի անդամների կախվածությունը մեկը մյուսից և օգնում հաղթահարելու խմբի առջև ծառացած խնդիրը, դժվարությունները: Անհրաժեշտ է այս ընթացքը խորացնելու համար սովորողներին տալ հանձնարարություններ, որոնց արդյունքում նրանք հաճախ կդիմեն միմյանց և կաշխատեն «մեկը բոլորի և բոլորը մեկի համար» սկզբունքով (Ted Panitz, 1996, http://www.cde.ca.gov/iasa/cooplrng2.html): Ուսանողները, այսպիսով, նոր լիցք կհաղորդեն միմյանց, կլրացնեն մեկը մյուսին և կհաղթարեն ուսումնական

պրոցեսներում առաջացած տարբեր խնդիրներ: Աշխատանքի արդյունքում նրանք ուշադիր են մեկը մյուսի նկատմամբ. օգնում են իրար միասին ավարտին հանձնելու աշխատանքը. յուրաքանչյուրն զգալով հավասարաչափ պատասխանատվություն հաջող ավարտի համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ձևավորվում է մի միջավայր, որում խմբի անդամները գտնվում են ոչ միայն սովորողի, այլև գիտակների դերում. կարող են խորհուրդ տալ միմյանց և խորհուրդ տվողը մեկ րոպե անց ինքը հարցնի: Նրանք օգտագործում են իրենց իմացած գիտելիքները ավելի հաճախ, անում դատողություններ, հետևություններ և նոր եզրահանգումներ, որն էլ իր հերթին ծնում է նոր մտահաղացումներ:

Համագործակցային ուսումնառության դրական արժանիքներից է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ սկսում է գիտակցել, որ կարող է ինչ-որ բան ասել, ընդ որում առանց քաշվելու, հասկանալով, որ մեկը չի կարող ասել ամեն ինչ:

Այս ուսումնառության ընթացքում սովորողները, միասին կատարելով տարբեր առաջադրանքներ և աշխատանքներ ձեռք են բերում հարց տալու և լսելու կուլտուրա, ձևավորում տեսակետ և կարծիք: Ուսումնառության կարևոր արժանիքներից է նաև, որ խմբային աշխատանքների արդյունքում, սովորողները ընդգրկվում են մտածողության այնպիսի բարձր մակարդակներում, որը թույլ է տալիս անել վերլուծություններ և համադրում, սինթեզ և ձևավորել հասկացություն:

Փոխազդեցության զարգացումը համագործակցային ուսումնառության հիմքերից է, որը ձևավորում է ուսանողների պատասխանատվությունը իր և խմբակիցների միջև, ստեղծում վստահության մթնոլորտ միմյանց կարողությունների և ունակությունների նկատմամբ: Ուսանողները խմբում միմյանց աջակցում են, յուրաքանչյուրը կատարում է մեկ գործ, լրացնում մյուսին (կարդացող, գրի առնող, հետազոտություն կատարող, ինֆորմացիա հավաքող, աշխատանքի կոորդինացնող և այլն) և, այսպիսով, ամբողջովին վերցնելով պատասխանատվությունը աշխատանքի (առաջադրանքի) հաջող ավարտի համար: Ուսուցման այս ձևի առավելություններից է նաև այն, որ առանձնանում են տարբեր որակներ և ունակություններ, որոնք լրացնում են մեկը մյուսին, քաջալերում նրանց օգտագործելու մինչ այդ թաքնված հնարավորությունները, առանց ընդգծելու թե նրանցից ով շատ գիտեր, ով քիչ և կամ էլ ինչ մակարդակների վրա է խմբի յուրաքանչյուր անդամի գիտելիքը: Արդյունքում շահում են բոլորը:

Գրականության ցանկ

1. Дэвид Клустер, "Что такое критическое мышление?", "Перемена" – Международный журнал о развитии мышления через чтение и письмо, 2001/4, стр. 36
2. Ted Panitz, 1996, http://www.lgu.ac.uk/deliberations/collab.learning/panitz2.html
3. http://www.cde.ca.gov/iasa/coopirng2.html